ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԻՄԱՍՏԱՍԻՊ

Գին՝ 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, Նոյեմբերի 5-ին. Թիֆլիս. №45.

ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Իտալիա.—Տարբիր, ես ուզում եմ որ տարբես, դու իմ կամքն է։
Թուրքիա.—Խաղա, տեսնենք—գուցէ կըտարբեմ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI Տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների։

Անհրաժեշտ թերթ բոլոր բնաւորութիւնների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի։

Հասցէն՝ Тифлисъ, редакція „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆԵՐԸ

Տարեկան	5 ր.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

Մեր թերթի բաժանորդներին «Սուրհանդակ» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով։

100 տարով բաժանորդագրուել ցանկացողին 75 % զեղչ։

Զրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՑԸ

1911 ՆՈՅԵՄԲԵՐ 30 օր

5

Суббота ՇԱԲԱԹ Ղազարոս

Լուսնի 24

6. (կիր.) Տօն ձայնաւոր ընարողաց ուղղաւային Թիֆլիսու, որք իրանց մարդկանցն անց կացնելու համար ամեն միջոց գործ դնեն գիտութեամբ կամ անգիտութեամբ, մեղայ Աստուծոյ։ Աստուած թողութիւն շնորհեսցէ։

7 (բ. շ.) Ցիշատակ մեռելոց „Նոր-Դարի“, որ յայտնի շաբաթի մի օրով յարութիւն առնելով, դարձեալ հանգեաւ ի Տէր։ Աստուած հոգին լուսաւորեսցէ ցնոր յարութիւնն նորա։

8 (գ.շ.) Ցիշատակ չարչարանաց ամենայն բեռնաւորաց և վաստակելոց հայոց, որք՝ կոտրած գդալի ծան քիթն խոթեն ի պուլիկն իւղոտեալ, զօր խելքն նոցա որպէս գոմշի մեռ ոչ կարէ մարսել։

9 (դ.շ.) Պահք։ Ով պաս ուտիցէ, քթոմն ելանիցէ։

10 (Ե. շ.) Տօն օրացոյցագէտիս, որ յայտմ օրուան է տիտղոսն „աստղագէտ և տօմարագէտ“ ջուրն նեռեսցէ։

11 (ուրբ.) Պաս պահեցէք, զի այդպիսեաց է արքայութիւնն յերկնից։

Աստղ. տօմար. և օրացոյցագէտ

Փարեմուզ

ԽԵԼՕՔ ՏԻՐԱՑՈՒՆ

—

(Նէէր Մանկունուն)

Զը գիտեմ, որ «սրբազանի» օրօք, 7 տիրացու ուզում էին քահանայ ձեռնադրուել։ Դրանցից 6-ը հարուստ էին, իսկ մէկը բոլորովին աղքատ։

Երբ հասաւ ձեռնադրութեան օրը, ամեն մինը ըստ կարողութեան «հայր սուրբին տեսան», և խնդրեցին ձեռնադրել. միայն աղքատ տիրացուն ոչինչ չտուեց։

Հայր-սուրբը, որ կիսանորդ էր սրբազանի հետ, տիրացուներին ըստ կարգի (տուած փողերի համաձայն) նստացրեց մեծ դալիճում. աղքատ տիրացուին էլ ամենից վերջը կանգնեցրեց ու ասաց.—«Որդիք, այժմ կըգայ մեծ սրբազանը, և ձեզ կասի, թէ թողէք ժառդրութիւններդ, քահանայական լուծը ծանր է և այլն և այլն... Դուք միաբերան կասէք, թէ որքան էլ ծանր լինի մենք պատրաստ ենք տանելու։ Զըվախենաք սրբազանի խօսքերից, որովհետև արդէն որոշուած է ձեզ ձեռնադրելը», պատուիրեց ու գընաց։

Քիչ յետոյ մտաւ սրբազանը. տիրացուները ոտքի ելան։

— Դուք էք այն տիրացուները, որ կամենում էք ձեռնադրուել։

— Այո, սրբազան հայր, մենք ենք։

— Ապա, որդիք, դուք չըգիտէք, թէ որքան ծանր է քահանայական լուծը, որքան պատասխանատու է այդ պաշտօնը. կը վհատիք, չէք կարող ձեր գործը առաջ տանել և ամօթալի կըմնաք։ Աւելի լաւ է, քանի դեռ ուշ չէ, հրաժարուեցէք այդ մտքից և գնացէք ձեր տները։

— Ոչ, սրբազան հայր, մենք պատրաստ ենք ամեն մի զրկանք ու նեղութիւն յանձն առնել և Քրիստոսի առաքեալ լինել։

— Ապա որդիք, եթէ այդպես է, և դուք այդքան պատրաստուած էք ու խելօք, ինձ գնահատեցէք, թէ որքան արժեմ ես։ Օրինակ, դու ինչ գին կըդնես ինձ։ Ասաց սրբազանը և ձեռքը մեկնեց վերի կանգնողին, որ 600 բուբլի փող էր տուել։

— Սրբազան հայր, դուք արժէք այնքան, որքան Ռուսաստանի պետական դրամարկղում ոսկի կայ։

—Ապրես որդիս, նստիր։

Դու ինչ կը գնահատես, որդիս, հացրեց 500 ռուբլի տուողին։

— Սրբազան հայր, դուք արժէք այնքան փող, որքան կայ Անգլիայի և Ֆրանսիայի պետական գանձարանում։

— Շատ ապրես, որդիս, նստիր։

— Եւ այսպէս բոլորի գնահատութիւնը լսելով հերթը հասաւ աղքատին, որ շորերը պատառոտուած կանգնած էր անկիւնում։

— Իսկ դու ինչ կըգնահատես ինձ, որդի։

— Սրբազան հայր, դուք արժէք 29 բուբլի 50 կոպէկ։

Սրբազանը այլայլուեց ու բարկացած հարցրեց.

— Ինչպէս... 29 ր. 50 կոպէկ... Ինչու այդքան քիչ գնահատեցիր, միթէ ես այդքան արժեմ, միթէ իմ գինը մի էշի գնի չափ էլ չէ.,. հը...

— Ներեցէք, սրբազան հայր, դուցէ սխալուած եմ, իմ խելքն էլ այդքան կտրեց։

— Ո՛չ, յանդուգն տիրացու, պիտի բացատրես, ասա շուտ, ինչու այդքան գնահատեցիր։

— Սրբազան հայր, մեր Տէր Յիսուսը 30 բուբլով ծախուեց, միթէ մեզք կըլինի, որ դուք նրանից 50 կոպէկ պակաս ծախուէք։

Սրբազանը հանգստացաւ, ու համբուրելով վերջինիս ճակատը՝ ուղարկեց միւսների հետ ձեռնադրուելու։

Զնդանեան

ՍԻՐՈՒՄ ԵՍ ԴՈՒ ԻՆՁ...

Սիրում ես դու ինձ... Օ՛ վաղուց ի վեր
Լոկ այդ եմ կարդում քո հուր աչերում,
Եւ վաղուց ի վեր—անքուն գիշերներ,
Ես այդ եմ խորհում, այդ մտքից փախչում։

Սիրում ես դու ինձ. բայց յանուն ի՞նչի,
Ցանուն անձնուէր չարքաշ տանջանքի՞,
Ցանուն «իդէալի»—մի անմահ մտքի,
Թէ՞ յանուն ստոր, հրատապ կրքի։

Այո՛, սիրում ես, բայց լոկ հայեացքի,
Իմ անուշ լեզուի և տեսքի համար...
Դու ինձ սիրում ես—մեղսոտ, կանացի
Անզուսպ գգւանքի, հաճոյքի համար...

Իսկ ես, օ՜ թոյլ կին, քո հուր աչերում
Մի այլ զգացմունք, սէր եմ որոնում.
Ցնոր հեշտանքի, վայելքի գրկում
Ջերմ համբոյրների ես չեմ կարօտում։

Ես չեմ կամենում—մաշուել, թառամել
Մութ ննջարանի փարթամութեան մէջ,
Ես չեմ կամենում անյագ ճաշակել
Ստոր հեշտանքի այն թոյնը անվերջ։

Ոչ, ես կուզէի, որ ինձ սիրէիր
Ցանուն իմ կրած չարքաշ օրերի,
Ցանուն մաքառման—այնքան անձնուէր,
Ընդդէմ բնութեան—ճակատագրի։

Օ՜, ես կուզէի մեղրածոր շրթի
Համբոյրների տեղ—դու որոնէիր
Իմ հոգու խորքում յարատև փառքի
Նշոյլը անբիծ, ինձ պէս տանջուէնը...

Այո՛, կուզէի, ինձ հետ միասին,
Բռնած տատասկոտ այս ուղին անծայր,
Անէծք կարդալով բախտի օրհասին,
Շրջէինք անծայր—մեր ցաւոտ աշխարհ։

Եւ ողջ մարդիկներ, անհուն զրկանքներ
Լինէր սիրելիս, մեզ հետ, մեր ընկեր...
Որ տիեզերքի անլոյս թշուառներ,
Լինէին մեր կեանք, մեր համբոյր, մեր սէր։

Բայց դու—հաճոյքի, նուրբ պաճուճանքի
Սիրահար մեղկ կին, դու այդ չես պտռում,
Դու, կոկետութեան, բոյր ու հեշտանքի
Արիւնոտ զաւակ, դու ինձ չենս սիրում։

Դու ինձ չես սիրում—երբ երեկոյեան
Խոր վերջալոյսին նայում են անթարթ,
Եւ սիրտս... սիրտս ինչպէս մի ովկեան,
Ծփում է—արիւն յոյզերով հպարտ։

Դու թոթռում ես, երբ ես լացում եմ
—Տարուած աննման պատնասի գրկում,
Օ՜, դու ժպտում ես, երբ լուռ խեղդւում եմ
Անհունի ծովում... դու ինձ չես սիրում։

Երբէք չես սիրում—երբ կշտամբում եմ
Քո խինդ վայելքի, անմիտ ճոխութեան
Եւ շատ բաներում. լաւ նկատում եմ
Դու ինձ չես սիրում, այո՛, յաւիտեան։

Ուրեմն գնա, վառ գգւանքներդ
Նւիրիր նրան—ով ունի մեծ, գանձ
Եւ նրան... նրան—ողջ վայելքներդ,
Ով ունի քեզ պէս—լոկ ճարպոտ մի անձ։

Խեներ

ԵՐԵՔ ՀԱՐՑ

(Արաբական հէքիաթ)

Սուլթան Սուլէյման Հրաշալին—Թող Ալլահը հանգիստ բաշխէ նրա հոգուն—մի անգամ, հագուստը փոխած, իր մեծ վեզիրի հետ անցաւ իր երկրով, որպէսզի իմանայ իր հպատակների զգացմունքները և մտքերը։

Ձմեռ օր էր, արևը մայր մտնելու ժամանակը, երբ նա տեսաւ մի ծերուկ, որը չընայած որ ցուրտ էր, մշակում էր իր դաշտերը։ Սուլթանը կանգ առաւ, օրհնեց նրա աշխատանքը և մի քանի ժամանակ ոչ մի բառ չխօսաց։

Երբ գիւղացին աւարտած իր գործը, կամենում էր տուն գնալ, Սուլէյմանը դիմեց նրան, հարցնելով.

—Որտեղից է այդքան ձիւնը գագաթին։

—Է՜, էֆենդի, հոգսերի շատ լինելուց։

— Իսկ, ասա, շատ խոռոչներ ունեն արջերը անտառում։

— Օ՜, այո, էֆենդի, որքան որ Ալլահը տւել է։

— Դէհ հիմա ասա, սովորութիւն կայ այստեղ արդիօք էշերին խուզել։

— Ինչպէս չէ, էֆենդի, երբ յարմար գէպք լինի։

Գիւղացին ճանապարհ ընկաւ տուն գընալու։ Երկու օտարականները ուղեկցում էին նրան։

Երբ նրանք մօտեցան դռանը, ծերունին ձեռքի շարժումով հրաւիրեց նրանց իր խրճիթը և ներս թողեց դռնից։ Տանտիկինը բերեց նրանց համար ուտելիք և պատրաստեց անկողին։

Մեծ վեզիրի գլխում շարունակ պտտում էին սուլթանի՝ գիւղացուն տւած հարցերը, որոնց նա պատասխանեց առանց կանգ առնելու։ Վերջապէս, էլ չկարողանալով զսպել իր հիտաքրքրութիւնը, նա հարցրեց իր արքայական պետին, թէ ինչ իմաստ են բովանդակում այդ հարցերը։

Սուլթանը ակնապիշ կերպով նայեց վեզիրի վրայ և գլուխը շարժեց, ասելով.

—Ինչպէ՞ս դու, Մոհառէմ, բարձր դռան մեծ վեզիրդ, չկարողացար ըմբռնել այն հարցերը, որոնց հասկացաւ հասարակ գեղջուկը։ Թշուառ, եթէ դու մինչ առաւօտ չը մեկնես ինչ նրանց իմաստը, դու կըզրկւես պաշտօնից և աստիճաններից։ Այս ասելով Սուլէյմանը ձգւեց անկողնում և շուտով քուն մտաւ։

Մոհառէմը, այլայլւած լինելով, սկսեց մտածել, թէ ինչ պէտք է հասկանալ ձիւն, առջ և էշ բառերից։ Որքան շատ էր նա մտածում, այնքան շատ էր ամպոտում նրա ուղեղը։ Վերջապէս, երբ արդեն խոր քնի մէջ էր, մեծ վեզիրը վերանալով գնաց լով հարևան սենեակը, զարթեցրեց գեղջուկին։

— Ծերուկ,—շշնջաց Մոհառէմը,—դու պէտք է բացատրես ինձ, թէ ինչ էր հասկանում իմ տէրը, երբ քեզ հարցնում էր ձիւնի, արջերի և էշի մասին։

—Է՜, էֆենդի... առաջին հարցը, սարի վրայի ձիւնի մասին, նշանակում է, թէ որտեղից են սպիտակ մազերն իմ գլխին։ Ես պատասխանեցի նրան՝—«հոգսերից».

— Լաւ, իսկ արջերի մասին, կա՞ն արդեօք նրանց համար խոռոչներ։

— Է՜, էֆենդի... նա մտածում էր, թէ գիշերելու տեղ կայ արդեօք օտարականների համար, իր համար և քեզ համար։ Ես պատասխանեցի՝ «որքան որ Ալլահը տւել է».

— Գեղեցիկ, իսկ ի՞նչ էր նա հասկանում էշի տեղ, որը ընդունւած է խուզել։

— Օ՜, այդ բանը, էֆենդի՛ մեծ գաղտնիք է, որը ես յայտնել չեմ կարող։

— Իսկ եթէ ես խնդրեմ քեզ, ծերուկ։

— Էլի ոչ։

— Ահա քեզ վարձատրութիւն այս ոսկին, եթէ ինձ բացատրես պատասխանը։

— Անկարելի է, էֆենդի։

Մեծ վեզիրը շարունակում էր խնդրել, բայց գիւղացին յամառում և չէր ասում։

Մոհառէմը կամացուկ վերադարձաւ իր սենեակը և սկսեց խելքին զօր տալ, աշխատելով գտնել «էշ» գաղտնիքը։

Արդէն աքաղաղը կանչեց, բայց վեզիրը խելքի չեկաւ և ոչինչ չգտաւ։ Խրոխտ արքայի զայրոյթն ու պաշտօնից զրկւելը, որպէս մի սոսկալի ուրւական, նրանից չէին հեռանում։ Ցուսահատութիւնից խեղդւած, նա բաց արաւ իր գօտին և վերցրեց այնքան ոսկի, որքան որ կարողացաւ տեղաւորել իր տուրբանում։ Այս ծանր բեռով նա նորից յայտնւեց գեղջուկի խցիկում։ Զարթեցրեց նրան և ասաց.

— Այս բոլոր ոսկին, ծերուկ, պատկանում է քեզ, միայն բացատրիր, թէ ինչ է հասկացւում «յարմար եղած դէպքում խուզում են իշին» բառերից։

Ցօրանջելով և ձգւելով, գիւղացին խըլեց ոսկին և պատասխանեց.

— Է՜, էֆենդի, այ հէնց այս դէպքն իսկ հասկացւում է։

Դ. Ալ.

ԿԵՆԴԱՆԻ ԴԻԱԿՆԵՐ

Կամակատար կինը

Հսող կուսակցականը

Սիրահարուածը



Մեղանչող ամուսինը

ՄԵՐ ԱՐԴԻ ԿԵԱՆՔՈՒՄ

ԳՐԵԼՈՒ ՆՈՐ ՆԻՒԹ

—

Հրապարակախօսը՝

Գրելու համար նոր նիւթեր
Դու չես գտնի ոչ մի տեղ.—
Բոլորն էլ հի՛ն, հին բաներ.
Թարմ նիւթե՞ր ես ի զուր տեղ
Դու յուսահատ որոնում.
Զարժէ, պարոն, մի՛ ջանար,
Գրիչդ թող. մեր կեանքում
Նոր բան չկայ մեզ համար։

Իւմորիստ՝

Գրիր, ախպե՛ր, տես իրօք
Այ քեզ մի բան թարմ ու նոր,
Թէ մենք ունենք շատ խելօք
Մի վարդապետ Ղեւոնդոր.

Սասանա

ՀԸՐԵՄԸ ԵՒ ԿՆՈՋ ԲԱՒԴՈՒԻԸԸ

—

Կինն Արեւելքում տղամարդի ստրուկն է, իսկ արեւմուտքում—նրա տիրուհին. այս ճշմարտութիւնը, հաւանական է դուք, իմ ազիզ ընթերցողներ, լսած լինէք 10—11 տարեկան հասակում։ Այս ճշմարտութիւնը կարելի է ամենայն հեշտութեամբ ստուգել արեւելեան հարեմը եւրոպական բուդուարի հետ համեմատելով։ Առաջինում իշխում է տղամարդը, երկրորդում թագաւորում է կինը։ Համեմատեցէք տղամարդի դրութիւնը հարեմում՝ նրա բուդուարում ունեցած դրութեան հետ։

Տղամարդը, հարեմ մտնելով, առանց մաղչափ անգամ քաշուելու հանում է իր հողաթափները և թողնում դռան կուշը, և դա նշան է, որ ինքն այժմ իր կանանց մօտ է և այնտեղ այլ ևս ուրիշների «մուտքն արգելված է»։ Իսկ գեղեցիկ կնոջ բուդուարը մտնելով, նա ոչ միայն չէ հանում իր ոտնամանները, այլ, ընդհակառակը, իսկոյն և ետ ընկնում է այդ բուդուարում ապրող կնոջ «հողաթափի» իշխանութեան տակ։

Տղամարդը հարեմում թութունը քաշում է առանց որևէ ծիսակատարութեան կամ նախնական թոյլտուութեան, իսկ բուդուարում նրան թոյլ է տրւում միայն խունկ ծխել՝ այն էլ անսահման քանակութեամբ։

Երբ հարեմում տղամարդն ուզում է իր առանձին բարեհայեցողութիւնը ցոյց տալ կանանցից մէկին ու մէկին՝ նա գցում է նրան իր քթի թաշկինակը, և մի շարք սիրունիկ ձեռքեր մեկնւում են այդ թաշկինակը ճանկելու համար։

Բուդուարում ընդհակառակը, բաւական է որ կինը վայր ձգէ իր անուշաբոյր թաշկինակը, բոլոր տղամարդիկ անմիջական շտապողութեամբ, գլխկոնձի տալով, վրայ են պրծնում այն բարձրացնելու։

Տղամարդը, սովորաբար, հարեմ է մտնում խալաթով, իսկ բուդուարում պիջակով մտնելն իսկ անվայել է. անհրաժեշտ է կամ ֆրակով լինել կամ այցեշորով։ Եւ դա շատ բնական է այն պատճառով, որ հարեմում մարդ կարող է իրեն պահել աւելի անբռնազբօսիկ կերպով, քան բուդուարում։

Բուդուարում տղամարդիկ պիտի կանանցը զբաղեցնեն. ասեն սիրալիր խօսքեր, սրախօսեն, զարճախօսեն. իսկ հարեմում կանայք են զբաղեցնում տղամարդկանց. ծխամորճը լցնում, մորուքը սանրում, կրունատակերին խուտուտ անում, էշխի բերում։

Ընդհանրապէս ասած՝ բուդուարում տղամարդիկ պիտի հետևեն կանանց, նրանց ծառայութիւններ մատուցանեն, իսկ հարեմում դրա միանգամայն հակառակն է կատարւում։ Ցանկացողներն իրենց ազատ ժամերին կարող են զբաղւել այն հարցով, թէ այդ երկու ժամանցներից որն է աւելի հետաքրքիրը։

Թարգմ. Դ. Բաբուրեանց

ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ

—

—Ես ձեզ խնդրում եմ հաւաքել այստեղից ձեր փասա-փուսէն.

Բոլորովին գունատուած, զալրոյթից ծրմբուած դէմքով, Անտոն Ալէքսանդրովիչը, սեղմեց ելէքտրազանգի կոճակը։

Եւ, երբ ներս մտաւ սպասուհին, նա թնդաց՝

—Դուրս տարէք այս պարոնին.

Հիւրի հեռանալուց յետոյ Անտոն Ալէքսանդրովիչը երկար չէր կարողանում հանգստանալ։ Կաբինետում չափում էր մի անկիւնից միւսն, սեղանից սեղան, տրորում էր ձեռները։ գլուխն էր ընում, ճակատը խոժոռում։

—Ինչպէս չէ, թոյլ կըտամ քեզ ասելու, որ կինս դաւաճանում է... Խեղճ ամուսնու աչքերը բացում են. այն էլ ինչպէ՞ս է դաւաճանում,—երեքի հետ. թէ՛, ինչպիսի՞ կեղտոտութիւն։

Նա կանգ առաւ կաղնուց ամուր շինած գրպահարանի մօտ և շարունակում էր մըտածել։

—Չհաւատալ չի կարելի,—ազգանուններն ասեց, Եղջիւրեան, Տէր-Փուփեան, Իշխան Թափանեան... Մի՞թէ, իսկապէս. երեքն էլ օգտւել են իմ կնոջից, և ես ոչինչ չնկատեցի, կամ, աւելի ճիշտ, նկատեցի կընոջը տոնը նրանց հետ խօսելիս, բայց մտածեցի, որ եթէ կինը կոկէտաբար է վերաբերւում ոչ մէկ, այլ մի քանի տղամարդկանց հետ, այդ դէպքում ընտանեկան կեանքին երկիւղ չէ սպառնում... Սակայն, ի՞նչ անել։

Ակամայից միտն ընկաւ՝

—Մենամարտի՞ կանչել.

—Բայց ո՞ւմ։ Բոլոր երեքին էլ։ Ծիծաղի առարկայ դառնալ կլուբի հաստափորներին... հերոս դառնալ այն ամուսնու անեկդոտին, որ ամեն օր պատահում է իր՝ խելքը տարած կնոջ սիրեկաններին... Եղջիւրեանը, թերևս, ուրախութեամբ կրկուի հետս մենամարտին,—այ Տէր-Փուփեանը, չթուրաքները ոեկլամի համար դրնք պատրաստ են ում ուզես մենամարտի կանչել, իսկ Տէր-Փուփեանը, օ նա իզուր չէր հպարտանում, որ ատրճանակից կարող է պատի մեխին կրակել.. Վախում եմ սատկեցնէ, ինչպէս մի յիմար հաւի... Ոչ, մենամարտի ես ոչ ոքի չեմ կանչի, ես համոզած հակառակորդ եմ այդ բարբարոսական սովորութեան... Բայց ի՞նչ անել է պէտք։

Որոշումը ինքը դուրս պրծաւ.

— Պէտք է խօսել կնոջս հետ։

Մի քանի րոպէից յետոյ նա արդէն կնոջ բուդուարումն էր, նայում էր նրա մերկ լիքը ուսերի վրայ, հետևում էր, թէ ինչպէս նրա բարակ ձեռները ոլորում էին շաղանակագոյն մազերը, և դողդոջուն ձայնով, կակազելով և խօսքերը շփոթելով, խօսեց և պատասխան պահանջեց։

Կինը լռում էր, շարունակելով սանրել մազերը։ Նրա ուսերի վրայից նա տեսաւ, թէ ինչպէս դողում էր նրա ներքի շուրթը, իսկ այտերը աւելի և աւելի կարմրում էին։

— Նիւշա, դէ, պատասխանիր. Այդ ճի՞շտ է, ճի՞շտ է։

Ցեռ չնայելով, կինը շշնջաց.

— Ես չէի ուզում քեզ այլայլել... Քեզ այսպէս անհրաժեշտ է հանգիստ մնալ, որպէսզի մշակել միտրոպոլիտենի նախագիծը, որը մեզ կբերէ բարօրութիւն... Ապա ակցիոներական ընկերութեան նախագիծը...

— Այդպէս, ուրեմն, ճի՞շտ է.

— Ես քեզ սիրելուց չեմ դադարել։ Բայց չէ՞ որ մենք մխսում ենք տարեկան եօթ հազար, իսկ դու վաստակում ես երկուսից ոչ աւել... Ես չէի կշտամբում, բայց չէի կարող. ախր ես վանել եմ մօրիցս մնացած ժառանգութիւնը... Մենք երեխաների տէր ենք։

Նրա սևուկ աչքերի վրայ փայլեցին արցունքներ։

— Երբ իշխան Թափանեանը առաջարկեց ինձ օժանդակութիւն,—ես համաձայնեցի... Ցիշում ես Գիւի-դը-Մոպասանի պատմուածքը։ Ամուսինը բախտաւոր էր, քանի ոչինչ չէր իմանում... Ես կարծում էի, որ կկարողանամ թագցնել քեզնից, և մինչև որ դու չես հարստանայ, ես քեզ կօգնեմ... Իշխան Թափանեանը հարուստ է, նրա համար ոչինչ բան է տալ երեք հազար տարեկան...

— Իսկ ա՞յն... ինչպէս է նրա անունը... Տէր-Փուփեանը։

— Նա տալիս էր իմ տուալէտի փողերը... Դու հասարակութեան մէջ այնպիսի դիրք ունես, որ քո կինը պէտք է միշտ զուգած լինի վերջին մոդայով...

— Օ, Տէր Աստուած. իսկ Եղջիւրեանը, Եղջիւրեանը։

— Եղջիւրեանը քեզ համար... Դու այնքան փողեր ես մսխել կլուբում թղթախաղում և ընթրիքների համար...

Անտոն Ալէքսանդրովիչը վայր ընկաւ բազկաթոռի վրայ ջարդուած, ճնշած իր կնոջ անկեղծութիւնից։

Կինն ասաց.

— Դու մի յուզիր. քեզ Ինաս է։ Եթէ քեզ դաւաճանէի սիրուց? Ես միմիայն քեզ համար, քո հանգստութեան համար, որպէզի ապրենք ուրիշներից ոչ վատ... Եւ հաւատա ինձ, սիրելիս, նրանք տալիս էին աւելի շատ, քան ստանում էին։

— Բայց Արկադիյ Իւանովիչը.—նուաց ամուսինը,—Արկադիյ Իւանովիչն ամեն տեղ մեզ կխայտառակի, ես նրան այս րոպէիս դուրս արի այստեղից, նա չարացած է...

— Արկադիյ Իւանովիչն էլ էր աշխատում ձեռք բերել իմ տրամադրութիւնը, բայց ես նրան մերժեցի։ Ես ազնիւ կին եմ, և, եթէ անհրաժեշտութիւն չլինի, ես չեմ խաբի իմ ամուսնուն. բայց դու մի անհանգստանար, ես նրա հետ բանս կըտեսեմ...

Անտոն Ալէքսանդրովիչը յանկարծ վեր ելաւ բազկաթոռից։ Նրա այտերի վրայ եւ բեւացին կարմիր շերտեր, աչքերը փայլեցին, ձայնը խռպոտեց.

— Չէ, մայ թէ ինչպէս լիրբ է. կանոնաւոր կինը մերժում է նրան տրփանքում, — իսկ նա պատրաստ է կատարելու ամեն մի ստորութիւն, որպէսզի վրէժ առնէ նրանից։ Ներս է մտնում ինձ-ամուսնուս մօտ մեր ընտանիքը խորտակելու դիտաւորութեամբ. այդպիսի լպիրշ մարդկանց, իսկապէս, ձեռք չի կարելի մեկնել։

— Մի յուզիր, Տնշա, քեզ վնաս է։ Իսկ նրա հետ ես գործը կըդրստեմ,— կըլսի։

Նա մօտեցաւ իր մարդուն և ձեռքը դրեց նրա ուսի վրայ, նայելով նրա աչքերին։

— Եւ քեզ սիրում եմ, Տնշա...

Ա. Դոմ.
(Ռ.)

ԵՕԹԸ ԽՈՐՀՈՒՐԴ

(Նէէր Մանկունուն)

—

Մի տիրացու, վարժապետներից մէկին 700 ռուբլի էր տուել, որ քահանայ ձեռնադրի։ Երբ նրան ներկայացրին սրբազանին, վերջինս իրը քննութիւն, հարցրեց նրան.—

—Որդի, եկեղեցին քանի՞ խորհուրդ ունի..,

— Եօթ հարիւր ռուբլի, սրբազան հայր.

—Շուտով ձեռնադրեցէք այս արժանաւոր տիրացուին, եղաւ սրբազանի կարգադրութիւնը։

Զնդաճեան

ԺՈՂՈՎՐԴԻԿՈՆ ԹԱՏՐՈՆ

—

Շաբաթ, հոկտեմբերի 29-ին, Հայոց Դրամատիկական ընկերութեան թատերասէրների խումբը մասնակցութեամբ դերասանների ներկայացրեց Բիսոնի «Անյայտ կին» 5 գործ. պիէսը։

Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր, ազատ էին միայն մի երկու լրագրի ընթերցողների աթոռները, այն էլ ամեն մէկի մօտ եօթ-եօթ կանդիտատներ էին կանգնեցրած։

Ասում են թէ հայերը հայոց թատրոն այցելել և հայերէն գիրք-ու Լրագիր կարդալ չեն սիրում։ Շատ բարի, բայց ինչով բացատրել այն հանդամանքը, որ Զուբալովի թատրոնը ամեն ներկայացման էլ լիքն է լինում հանդիսականներով, իսկ Բարեգործական Ընկերութեան ընթերցարանը ամեն օր խռնուած է լինում ընթերցողներով։

Դրա պատճառն այն է, որ մէկն էժան է ինչպէս այծի միս, իսկ միւսն մուքթա՝ որպէս աւելուկ։

Թող ոչ ոք չնեղանայ ու չկարծի, որովհետև ես էլ, դու էլ, նա էլ, մի խօսքով բոլորս էլ միևնոյն բնաւորութիւնն ունենք։

Ուզում էք փորձի համար մի տակա նըշանակեցէք, որ ով կաթողիկոսական հարցի մասին մի-մի բուբլի նուէր տայ յօգուտ դպրոցական-ուսուցչական ֆոնդի, կը տեսնէք որ այդքան կաշուից դուրս եկող և կաթողիկոսական հարցի մասին խօսողները բոլորն էլ ասպարէզից փ՚ըշտ էլան ու ճաչցինք մենակ ես ու դու։ Ամենքն էլ Տնշականենց Աղաբէկը չեն լինիլ, որ մի չարէքի տեղ կէս թունգի առնեն. կարօտ գլխատ հոգին գիտենայ, որ ասածիս գուցէ կէսը սուտ լինի։

Հա, խօսքս թատրոնի մասին էր։

Պիէսը բաւականին հետաքրքրական է, մանաւանդ 4-րդ գործողութիւնը, ուր մարդասպան անյայտ կնոջ դատավարութիւնն է լինում։

Բայց ես խորհուրդ կը տայի պ. Բիսոն-

ՓԵԼԻԷՏՕՆ

ԴԱՉԱՒՈՐ ԿՆԱՆԻՔՈՆՑ, ԱԽՉԻԴԵՐՔՈՆՑ ՔԷՖԱՆ-ՍՕՑԲԱԹԱՆ

(Պարովակիր Բաքուի խաբարին)

(Շարունակութիւն)

Երկու օր ետով քինացի Ժելեզնաւոդսկի փոշտախանան. հէնց նէս մտնիլը բաշտան, փոշտիլօնը ասեց. «մադամ, պիսմо իմէյտէ, տօլկо չտо պօլիչիլ»։ Ինձ երկու բալաջա փագէթ տուին. ադրէսը կիրած էր. «Գոսպաժա Դինչդուրմաղանցօվոյ»։

«Եկա մի ծառի տակին նստեցի, փագէթի մինը պեացեցի, մին վիդիտի կարտիչկայ էր, մի երեսը թանակով կիրած, մին երեսը անըմ ֆամիլա տիպած։ Տիպած էր «Արտէմ Գերասիմիչ Թօվլամիշանողեանց», Բագու։ Բագու խօսքը ճինչալ էր կիրալ Պետիդորսկի։ Կարտիչկի ան մին երեսըմը թանակով կիրած էր.

—

«Սիրելի Սօնիչկայ։

«Կիրակի օրը անպայման կը դաս, ես քեզ Պետիդորսկիի վագզալըմ սպասելու եմ, այնպէս արա ամուսինդ չիմանայ, կասես բժիշկը ասել է վաննա պիտի ընդունես։ Մինչև կէսօր իմ վաննաս կը ունդունես և ճաշին կը ճանապարհես էլի։

«Քո Արտիշ»։

Աս կարտիչկան կարթիլաս ետով տիրի ջիբիս, պեացեցի ան մին փագէթը։ Տա ալ թուղթ էր, մէջին կիրած։

—

«Դարագօյ Սօնիչկա-միլիչկա։

Ինչպէս անցեալ օրը (անտառի կետի ափին լօղալիս) խոստացար, կիրակի առաւօտեան Կիսլաւոդսկիի վագզալում սպասելու եմ, զաւտրկան զակազ եմ տուել, իմ ապրած գաստինցի պովրը շատ լաւ ցպլեատ է խորովում։ Ապուշին (ամուսնուդ) գիտեմ խաբելու ձևը կիմանաս, ես նկատել եմ, որ նա ձեր բնակարանի կազչկա խաղէյկին ուզում է ձեռք ձգել, ուրեմն շատ ուրախ կըլինի, որ ոչ թէ ցերեկները, այլ և գիշերներն էլ բացակայ լինես տանից։

«Դէ, ուրեմն կիրակի օրը միասին կը լինենք։ Համբուրում եմ թշիդ խալը։

«Քո Սերօժա»։

—

Աս պարովակիրերը կարթիլան ետով, խէյլագ ֆիքիրի քինացի, մտկըմս ասացի, փառք քէզ Աստծ... Բեագանամ աշխարքի երեսին ալ աթանց կնանիք ան իլա... Բաս աթանց պեանները Աստծ վեր կունի, բեազանամ նշանածի առնուն-քրտնիքով աշխատած փողով կնիգը լօթի, օյնաշ կը պահի... Վայ, վայ, Աստծ քոռացրու ինձ՝ աթանց պեաներ չի լիսամ։

Ետով ալ ասըմ ան քի հացը թանդացալ ա, գիրանքան մին շահի ա ծախուրմ... աթանց բէնամուս կնանիքը հացի գիրանքան մին արասիով ալ չբիդի քիթանան։

Քեասպար ջան, ես հինչքան քի ֆիքիր աս անըմ, աս բիաբուռչի կնանիքը իրանք թախսիրքար չան, թեախսիրը, մեղքը իրանց նշանածներն ան, որ աթանց արխէյին բրախ ան տալ Պետիդորսկիի չեօլերը։ Ուղորմաց հոքի դադաշ կասէր քի «կնանիքը թութի ղուշ ան, տղամարթիգերքը թութի ծառ. հէնց քի, կասեր. թութի ղուշին բրախ տիր, դիւղ թռչիլու ա թութի ծառի վերա...» Ախր այ տատը կոխամ ծիղի, այ հաւայի փափաղ տինող տղամարթիք, տիւք հինչի էք ձեր կնանիքոնց մեանին-մենադ դաչ խրկըմ, տիւք հինչի էք թողնում, որ նրանք եադ տղաների հետնան ծանօթանան, մանցիոն անան, տանց պար կեան, որ ասօր համ ձեր փողով բժիշկ ուսանող կարթան, համ ձեր փողով ծեղ դուբին, ապուշ ասան, համ ալ ձեր փողով ձեր կնանիքոնց հետնան քէֆ անան...

Քեասպար ջան, մին քէօյնա սօյբաթ ընդաւ մտկս. թող ես նեաղլ անամ, տիւ ալ լիսի և տէս քի շամախեցի տղամարթիգերքը հինչքան նամուս—դերեաթով մարթիգերք ան։ Լեաւ մտկիս չի, չամ իմանըմ քանի տարի առաջ, համմա լաւ լեաւ մտկիս ա-

նին, եթէ նա կենդանի է, պիէսի 5-րդ գործողութիւնը թլաշել ու դէն ձգել, որովհետև դա մի աւելորդ պոչ է, ինչպէս մի ժամանակ խաբարդան կանանց համար։

Դերակատարները, բացի մի երկուսից, կարծես խօսք էին տուել այդ օրը շատ յաջող խաղալ։ Մանաւանդ տիկ. Արմէնեանը, որ խաղում էր անյայտ կնոջ դերը, յայտնի եղաւ իր այնպիսի գեղեցիկ խաղով, որի նմանը նա դեռ չէր ներկայացրել ժողովրդական բեմի վրայ։

Մի բան շատ հետաքրքիր է. իւրաքանչիւր անգամ ծրագրում իրրև ծանօթութիւն գրում են թէ «վարագոյրը բարձրանալուց յետոյ մուտքի բոլոր դռները փակւում են մինչև վարագոյրի իջնելը», մինչդեռ, հակառակ այդ ծանօթութեան, լօժաների դռները ուղրաւայի դռների նման խաղի ժամանակ հէնց շարունակ բաց ու խուփ են լինում։ Գուցէ այդ դռները դահլիճին չեն վերաբերում, այն ժամանակ հարկաւոր էր ծանօթութեանը մի ծանօթութիւն էլ կցել թէ՝ «Բացի լօժայի դռներից»։

Փարեմուզ

Կենսագրութիւնք

ԱԶԳԱՑԻՆ ՄԵԾԱՄԵԾԱՑ

(Շարունակութիւն)

IX

ՍԱՊԱՀ-ԳԻԻԼԵԱՆ.— Մտերիմ բարեկամն Ակնունեայ, այնչափ մտերիմ, որ եթէ մէկն ի նոցանէ անցնէ կամուրջիւ, միւսն զինքն ջուրն նետիցէ և զայն կամուրջիւ ոչ անցանիցէ։ Ոմանք ասէն՝ զայս մտերմութիւնն նոցա յառաջ է եկեալ ի պատանեկութենէ, յօրժամ նոքա երկուսին եղեալ են յոյժ մտերիմ դասընկերք։ Ծնեալ է... (քանզի յոյժ յարգեմք զնա, ուստի ամաչեմք անուն ծընընդավայրին նորա տալ)։ Ականաւոր աշխատակիցն եղեալ է «Նոր-Դար»-ին, և քաղաքական բաժինն ստանձնեալ, Եւրոպայէն թղթակցէր և ոչ թոյլ տար Նոր-Դարն Հին-Դար դառնալ։ Երկու ամ եղեալ է միաբան ս. Երուսաղէմի և զհետ խայոց Խայրիկին ճաշակեալ է հուչակաւոր «հարիսան» Ս. Տեղեաց։ Ներկայիս հուչակաւոր հրապարակախօս և անուանի հռետոր, սակայն ձայնն ափսոս ոչ է համապատասխան։ Յորժամ սկըսանի ճառն, այլևս՝ ոչ գտանէք զվերջն։ Իսկզբանն է անտի գիւտ մեծ արարեալ է և ցարդ կրկնի՝ Հայն հայէ, թուրքն՝ թուրք... Ինչ էլ լինի՝ ոչ մոռանայ, զի Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ է զաւակ (Օրնեալ եղիցի «հարիսան» Երուսաղէմի)։ — Ինչ փոյթ, եթէ երբեմն բարբառէ յաթէիստութիւն է, ի սոցիալիզմ է և... դէ ես զինչ գիտեմ ուրիշ ինչ զաղերէ։ Օրհնեալ եղիցի տկլոր գլուխն նորա, ամէն։ Այլև խորհուրդ տամք նմա զի հեռու կացցէ ի խորամանկ գեաղա-գիւղայից, որք կարող են օգտուել ի միամտութիւննէն նորա և բաղմամեա «ամագդ Երուսաղէմ» անել։ Յոյժ ցանկալի էր, որ նա ի միտ առնէր հոգեբանութիւնն հայ ժողովրդեան, որ ասէ. «իգիթին ադի էշիթ-էօղնի չեղոմա»։ (որ թարգմանի՝ անուն քաջի լուրջ և իրին ոչ տեսէք)։ Յոյժ բարի կըլինէր, եթէ նա գրուածքն իր տարածէր ի մէջ հայ ժողովրդեան և ինքն ոչ երևար և ոչ ոք ոչ տեսնէ զսխտորանման գլուխն նորա։ Տէրն ի փոխարէն մաղերի, լցցէ գլուխն նորա ևս առաւել խելքով և իմաստութեամբ ի փառս հայոց ազգի, ամէն։

X

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ.—Վասն վաղամեկիկ եղբօրն զրանաստեղծ Պետրոսի ազգանունն կրելու համար, անուն սորա ևս հուչակեցաւ ի մէջ ազգիս։ Արտաքին տեսքն՝ ոչ է տգեղ, թէև ոչխարանման հայեացքն ցուցանէ զկամազուրկ լինելն, գլուխն շարունակաբար զթեք պահելն՝ նշան է՝ «ամենայն հողմոց շարժի»։ Բնաւորութեամբ է յոյժ քնքոյշ և թերևս այդ է զպատճառն մի ևս, որ յետ մահուան «Երկաթեայ» կաթողիկոսին, բազումք կամին ունենալ այժմ «բամբակեայ» կաթողիկոս, խորհելով՝ եթէ երկաթն բամբակ զդուրս եկաւ, գուցէ Տէրին կարողութեամբ «բամբակն» էլ «երկաթ» զդուրս եկեսցէ։ Երբեմն կատարէր զտեսչական պաշտօնն Դպրեվանքին Արմաշու Վանուց և էր յոյժ խոնարհ և հլու կամակատար վանահօրն Օրմանեան սրբազանի և խոստովանութեամբն իսկ իւրեան՝ շնորհիւ հոգեհարազատ և բարեխնամ եղբօրն Օրմանեանի էր, որ բացաւ աչք մտաց նորա և հուչակեցաւ ինքն որպէս գրագէտ և ճարտասան, իմաստուն և խոհական, ափսոս սակայն՝ վասն խոհականու-

---

որ Հայրիկ կաթողիկոսը նոր էր թախտ նստալ, ան մեծ խօլերն ալ նոր էր մեր եախին ցէք քաշալ, դէ հիմի տիւ կըմանաս քանի տարւայ խօսք ամ ասըմ։ Ան վախտերում մեր ազիզ-խալաթ Շամախին ուսումով ջայիլների ցէքին էր, եաւաշ-եաւաշ շամախեցիներին հասկացուրալ ին քի հինչ ա մշակականը, նորդարականը։ Տէր-Ֆաճառը, որ հիմի Բաքու ա, տէր—Տիկրանը, որ հիմի Դեարբանդ ա, տէր-Խաչատուրը, որ հիմի, ագանամ լեաւ մտկիս ա, հիմի Ղզըլ-Արւադ ա, Ցարութուն վարժապետը, որ հիմի Զոռնի-զորոդի «Արամազդի մէծն ա, դրանք չիմ ան վախտ մեր Շամախիի վարժապետներն ին, հիմի տէրտէրներ ան իլալ։ Տրանց հետնան չաշկալ-օրկա ին «Մշակ» կազէթին կիրող Ղարաղաշանց Սումբաթը, Քեասպար վարժապետի տղա Գողուսը, Օսէփ բեագի տղա Վալոդեան, երևանցի տէր-Արսէնի (Աստած ուղորմի նրան) տղա Մուշեղ Բագրատունին (Աստած ուղորմի Փալանդուզ Մկոյին, նա Մուշեղի աշնան էր) տալօնչա տղա պարտնոյ Գրիքորը, մին խօսքով դրանք Շամախիի ուսում առած վարժապետներն են։ Մին օր Տկրան վարժապետին, Սումբաթին, Գողոսին, ալ լեաւ մտկիս չի, ալ հում հարսանիք են կանչալ Օհանջանանց Բալասիի ախպոր տունան։ Դէ մէր Շամախիմը ադաթ ա, կնանիքը մին տունումը կընստան՝ ախչիգերքոնց հետնան, մարթիգերքը մին տունումը՝ տղորքոնց հետնան։ Սազանդան կնանիքոնց մօտին ածըմ էր, կնանիքը, ախչիգերքը պար ին կեամ։

Ան ասկասէր-լուսաւորուած ջահիլներ—հոգիթասարթները քինացալ մտալ ին կնանիքոնց թամաշա ին անըմ։ Մին ալ տեսայ, այ բաշուա դէօնում, տան տէրերան մինը մին դանա զօղալի ճուպատ ցէքին մօտացաւ ան լուսաւորուած ջայիլներին և փարթ ա փարթ ճուպատը քաշէց տրանց թիգնամէջան ասիլով. «քէօփօղլի լակոտներ, հինչ զալաթ էք անըմ ստեղ... խալխի կնանիքը պար ան կեամ տիւք հինչի՞ էք կաննալ կնանիքոնց թամաշա անըմ, նրանց իրեսը տեսնըմ...

Այ բաշուա դեօնըմ, քու արև, Քեասպար ջան, որ պեարակ ճուպատը քի տրանց մէջքան չրըմվի ա չրըմվի չկպաւ, տրանք մին փախչըմ ըն քի, լավ կասես Մահամադ Ալի Միրզայի սարվազները իլին։

Հիմի տեսնըմ ես, Քեասպար ջան, տղամարթը կնգան վերա դարօլչի բիդի իլի, ագանամ կնգան կլխան դափազը վեր կալալ, նրանա քեզ համար կնիգ չի իլիլ։ Տիւք տղամարթ էք, կնանիքոնց աւետարանը չէք կարթալ, համմա ես անկիր ամ իմանըմ։ Ան իրեք հրշտրագը քի քինացալ ին Սատամ-Կամօրը պաժար անիլի, նրանք Ղվատ ապերին ալ բիդի երին կրակի մէջին, չինքի նրա կնիգը շատ սատանան էր, համմա հրըշտրագներան մինը Ղվատի կնգան հետնան քի աշնա իլաւ, մին պլան քաշեց, որ Ղվատի քիֆլաթը ազատաւ. դէ հինչ արած, կէս ճանապարին Ղվատի կնիգը յետ միտիգ արաւ քի տեսնի իրան աշնա հրըշտրագը կեամ ա, Աստած նրա բար շինեց (կանանց աւետարան, գիրք Սոֆիայի, գլուխ ԺԹ. մասն Զ.)։

Ուրեմն տեսնըմ ես. կնիգը քի Աստու խըրկած հրըշտրագին թողամիշ անի, տես մեր թեազա կնանիքը Աստու սատանաներին հինչ պէս ցէք կըպերան...

Ախըր քի, Քեասպար ջան, Աստած փիս կնանիքոնց ալ աշկը հանի, փիս մարթիգերքոնց ալ, ագանամ Աստած տիւք Աստած իլեր, մարթիգ մին ջուռա կը շինէր, ոչ թէ քի մինին բեղ-մուրուք կը տար, մինին ալ մալայ կանէր։

Ես ցէքիս կիրիմ ամ Կիսլաւօդսկիի պարկի աջ անտառի մէջին իլած կնանիքոնց, ախչիգերքոնց խառնը ժողովան։

Մնամ քու քիւրացու՝

Շամախեցի տիկին

Գեօզալ Աղաբաջի

թեան այլ փաստք ոչ ունիմք, ի բաց առեալ այն զի քաջ ըմբռնեալ պահանջ ժամանակին՝ սկսաւ պարել եղանակաւ թայֆայակա-կանանաց և ամենեքեանք վկայ են, որ ի-մէջ փոթորկեալ ժամանակի, յորժամ «շունն զտէր ոչ ճանաչէր», յաջողեցաւ շահել սիրտն ամենակարող Ակնունւոյ և համայն խուժանապետաց և շնորհիւն նոցա բազմեցաւ ի գահ պատրիարքութեան Կ. Պոլսոյ։ Ապացոյց այնմ, զի նա է անաչառ, ճշմարտախոհ և գթառատ հայ ժողովրդեանն,—յորժամ գաղթականք յետ սահմանադրութեանն վերադարձեալ խանդավառութեամբ, զհայրենի տունն գտեալ էին աւերակք և նըստեալ ի վերայ մոխրակոյտից, մերկ և անօթի սգային—աւաղելով սոխ ու սխտորն Եգիպտոսի և նոյն իսկ յառաջի քթի նորա ի գաւիթն Գում-Գաբուի Մայր եկեղեցւոյն վասն պատառ մի հացի՝ միմեանս ըզկտէին և անհամբեր սպասէին ըստ խոստմանն պատրիարքարանի, զի Ռուսաստանից դրամ եկեսցէ, որ զնոսա ճանապարհածախք տայցեն և ուղարկեսցեն Հայրենիք. յայն ժամ բարեգոյթ պատրիարքն Դուրեան, վասն այդ գաղթականաց համար զկոպէկ-զկոպէկ հաւաքեալ և ուղարկեալ 20,000 ռուբլին տայր առատ-առատ ճանապարհածախք կաթողիկոսական պատգամաւոր ընտրեալ էֆէնդեաց հոսոսականաց, որ յօժարեսցին զնալ զէջմիածին և զարժանաւոր կաթողիկոս ընտրեսցեն... Անշուշտ այդ գումար ի մէջ ի մէջ հաշէյցուցակին մտանելոց է՝ ճանապարհածախք գաղթականաց եւ մեծապատիւ մուրացկանաց... Գլուխ գործոց խոհական պատրիարքութեան նորա էր քաղաքագիտութիւնն, որ շահեաց սիրտք տաճկաց և երիտասարդ տաճիկք վասն դորա խաթեր համար զրկոտորեցին զհայս աւելի քան 20,000 հոգի, որ ի յԱդանա... ի ժամանակի պատրիարքութեան, նորա «ժողովրդական իրաւունքն» հաստատեցաւ և բազում աղայք և էֆէնդիք թակեցան ի մէջ եկեղեցեաց զօպպայիւք և գաւազանօք։ Արդ՝ բազումք կամին տեսանել զնա բազմեալ ի գահին Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, քանզի վստահ են, զի անդ բազում-բազում 20,000-ներ կան և բարեգութ Հայրն ոչ խնայէ ամենեցունց ուշխատաւորաց մասն և բաժին հանել։ Հակառակորդք զրպարտեն զնա, թէ—խոստացեալ է՝ յորժամ ինքն լինի կաթողիկոս՝ ձայն ոչ հանէ և ոչ հետաքրքրի, թէ՝ զինչ եղան գումարքն հանգանակեալ ի մէջ հանուր աշխարհի՝ վասն Սասունի, վասն Զէյթունի, վասն գաղթականաց, վասն կարմիր խաչի, վասն սև ձեռքերաց, վասն մութ հոգւոց, վասն... վասն... հազարաւոր ինքնահնար անուամբ, որք մտեալ են ի գրպանս «ազգայինչիներաց»։ Աղօթեմք, զի վերջն բարի եղիցի և ազգանունն վաղամեռիկ բանաստեղծին Պետրոսի Դուրեան, անբիծ մնասցէ. ամմէն։

XI

ՄԵՍՐՈՎԲԻՈՍ ՄԱԳԻՍՏՐՈՍԻՈՍ.—Ծընեալ է ի 1865 թ. գարնան, ուր ծնանին խելօք մարդիկ, որ է Ղարաբաղ։ Պարթև հասակօքն, գեղատեսիլ ժէտոնն մագիստրոսութեան ի կրծքին, յորժամ սիգաճեմ գուլեատ կանի (կզբօնու) ի վերայ մայթին Դիֆրցօվի փողոցին Թիֆլիզու, ամենեքեանք կարծեն, թէ ս. Սահակ պարթև Հայրապետն իցէ, որ գնայ առ Շապուհ արքան, խնդրել ի նմանէ՝ առնել սպարապետութիւնն ի տոհմէն Ամատունեաց և տալ զցեղին Մամիկոնեան, քանզի Համազասպ Մամիկոնեան ամուսինն էր իւր Սահականոյշ գստեր, յորմէ ծնաւ Հերոսն հայոց՝ Քաջն Վարդան Մամիկոնեան։ Մեսրովբ, Սրբազանն գալով առաջին Մարդիստրոսն ի մէջ Էջմիածնականաց և Քաջ Ռուսագէտ, յոյժ մտերիմ կապ հաստատեաց ընդ բարձրաստիճան պաշտօնեայս և ամենեքեանք յարգեն և պատուեն զնա և մեծարեն ի վերայ համադամ խորտիկաց և ախորժալի ըմպելեաց։ Մանր-մունր պաշտօնք, որպիսիքն են՝ առաջնորդութիւն, փոխանորդութիւն և յաջորդութիւն անհամապատասխան չլինելով զիրքին և հմտութեանն նորա, ցարդ ոչ է ընդունեալ և վարեալ, ի բաց առեալ միմեայ տեսչութիւնն Գէորգեան Ճեմարանի, ուր մտցրեաց ազատամտութիւն ի մէջ աշակերտաց և դուրս վանեաց զճեմարանէն պահպանողական տխմարաբանութիւնքն կրօնական առարկայից։ Եւ ինչ պիտոյ է Հոգևոր Ճեմարանին առանդել զկրօնական գիտելիս. ինքն որ ոչ գիտէ զկրօն, զհայոց լեզու, զպատմութիւն, պակաս դարձեալ է եպիսկոպոս... Արդասիք գիտնականութեան նորա 18 մեծահատոր աշխատութիւնքն, որք թէպէտ չեն տպագրեալ տակաւին, սակայն... Հալբաթ օր մի տպելոց են—եթէ գոյութիւն ունեցին։ Խանդամք մեծատանց յոյժ յարգեն զնա և վասն նորա խաթեր համար՝ երբեմն գումարք նիւրեն Ս. Էջմիածնի պիտոյից։ Նա ոչ սիրէ զազգայինչիս և փոխադարձաբար նոքա էլ ոչ սիրեն զնա, սակայն վասն խոհեմութեան պոլիտիկայի համար, խարեն զմիմեանս, ցուցանէին, թէ զնա ընտրեն կաթողիկոս, այժմ կանդիտատք իւրեանց ներկայացնեն այլք, այն է՝ զՍուրէնեան և զՄորեմ Բէյուրազեանն։ Եւ Մեսրովբ արհին մեր Մնացեալ է շիւարեալ և ոչ գիտէ ինչ զանել։ Ահ, թէ սկիզբն չգիտենալոց իցէր—ի զուր Հաջի Համբարձում աղային ձեռքը ոչ բաժանէր զիրան ձեռքից։ Անիւն Մեսրովբ արհուն թարս շուռ եկեալ ի մէջ ազգայինչիներաց, յորժամ մեռաւ ծերունազարդն մեր Ղազարոս Աղայեան, որ յոյժ սիրէր զնա և ամենայն զեռանդով պաշտպանէր, մեծարէր և անունն հռչակէր, որպէս իր նախկին աշակերտ իՇուշի։ Եւ արհին երախտագէտ փոխարինեաց բարութեանցն նորա,—ի ժամանակի տեսչութեան իւր ի ճեմարանն, յաջողեաց ընտրելի կացուցանել թոշակին՝ զՄուշեղ տղայն Աղայեանի, որ գնացեալ ի կոնսերվատորիա, դառնալոց է երգիչ և ի պայծառութիւն Հայոց ազգի, ի մէջ թատրոնաց մայրաքաղաքի ռուսերէն և իտալերէն բոմանսք և օպերայք երգելոց է։

Թէպէտ Մեսրովբ արհին «քիչ մը բարի է» ի հայոց լեզուէ, ի պատմութենէ, ի կրօնագիտութենէ, սակայն յոյժ բարի է և առաքինի, ճշմարիտ հետևող քրիստոնէական վարդապետութեան, որ ասէ. «Ազգ և ազինք և լեզուք եղիցին մի հօտ և մի հովիւ». այդ է անենչանք արհւոյն։ Եւ Новое Время լուրջ թերթն, որ նոյն մարդասիրական գաղափարքն սնանի, բերանօք գլխաւոր աշխատակցին իր Մենշիկովի, ամենայն ջանիւք ճառէ վասն անխտրականութեան ֆինլանդացւոց, լեհաց, հրէից, վրաց և հայոց ընդ ռուսաց ուղղափառաց, յոյժ գովական յօդուած մի տպեալ տարւոյս յունուար 8 համարին վասն Մեսրովբ արհւոյն և կամելով ապացուցանել զնա ճշմարիտ աշակերտ Առաքելական ս. Եկեղեցւոյ, կրկնեալ է կարծիքն նորա, թէ՝ «եթէ հայք մինչ ցարդ չեն միացեալ զհետ օրթոդոքս եկեղեցւոյն, պատճառն է յամառութիւնն, որ յառաջանայ ի տգիտութենէն», այսինքն՝ եթէ իրաւունքն եղեցի ի ձեռն կրթեալ և մագիստրոսցեալ կաթողիկոսի, դադարի յամառութիւնն և եղիցին «ի մի հօտ եւ հովիւ»։ Բազում հակառակորդք արհւոյն այդ «մատի փաթաթան» արարեալ, ի մէջ լրագրաց հարցմունք ուղղէին զնա, թէ՝ «ճիշտ են բանք Մենշիկովի մէջ «Новое Время»ին։ Քաջ զգիտենալով նա, թէ հարցմունքդ այդ վասն բանսարկութեան տան հակառակորդք, որպէս զի «քար ձգեսցեն» ի վերայ կաթողիկոսութեան նորա, արհին ոչ պատասխանեաց հարցմունքներին և արհամարհեաց։ Նա յոյժ սիրէ զհովիտ թերթն և այժմ կամի «Խաթաբալայական» լինել. յուսամք զի Դասապար Բիձան Կալատուզովեան ընկալցի զնա ի շարս իւրայնոց, ամմէն։

(Շարունակելի)

Ճնդրիկ Աբեղայ

ՍՈՒՆԿԵՐԸ ԵՒ ԿԱՆԱՅՔ

—

— Սունկերի անպայման սեպհականութիւնը—գլխարկները—միևնոյն ժամանակ և կանանց սեփականութիւնն է։

— Լաւ են միայն «պատրաստուած» սունկերը։ Մինթէ նոյնը չեն և կանայք։

— Սունկերը, ինչպէս և կանայք, այն ժամանակ միայն գին ունին, երբ «քորփա» են (ջահել)։

— Սունկերը սիրում են «մաղող անձրևը»։ Կանայք էլ են սիրում, և ոչ միայն սիրում են, այլ և որոտ ու փոթորիկ արտադրում։

— Սունկերում շատ յաճախ կըգտնէք «սունկի որդուններ», իսկ կանանց մէջ՝ «անձնասիրութեան որդուններ»։

— Ակնյայտնի է, որ կանանց և սունկերի միջև շատ նմանութիւններ կան։

Թարգմ. Գ. Բար.

ԴԱ ԿՐԿԵՍՑՈՒ ՄԵՐ ՀԱՄԱՐ ԼԱՎ

— Դիտատու, տրեքէն կաց. մեզ որ կտոր ցանգ կտոր. կարգ-
գիներս որ պատնաս, դու էլ մեզ շիտակաս։

ԴԱՎԱԿԱՆ ՄԱՄՈՒ

— Բարեկամ, ինչ ես ասում, ինչ ես ասում։ Ամարիտ
Հարամարտ Ասարիանց, Հարամարտ Ասարիանց։
— Բարեկամ, ինչ ես ասում, ինչ ես ասում։ Ամարիտ
Հարամարտ Ասարիանց, Հարամարտ Ասարիանց։

— Տо բարով, Կարապետ, էս վուրդի իս, չիս էրէլում, դուն, գիդիմ, ասկային գուրձերով կուլիս զբաղած. բաս ախպէրդ ուր է, վաւր ջհաննամումն է։

— Նա. նա խիստ զբաղած է, Հերապիտ, ժամանակ չունի խալխի մէջ էրէլալու։

— Ի՞նչ գուրձով է զբաղած։

— Սիրահարած է։

Դ. Բ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՕՏԻՒ

Ես սարն ելայ եարիս եղնայ՝
Երան տեսնեմ ու ասեմ.
—Նայի՛ր, ահա՛, սի՛րտս արունա.
Ես ի՞նչ անեմ, ո՞ւր կորչե՛մ...

Ճամբի կիսին, աչքս հեռին
Ցառեցի ու նստեցի...
Ամպն երկնքին գոռաց ուժգի՛ն—
Սիրտս տուի կարկուտի՛։

Երբ սա՛րն ելայ եարիս տեսայ,
Ինձ ջա՛ն չասաւ—նա փախա՛։
Ամպն ահա՛ խեղճիս վերայ
Կարկուտ թափաւ ու մաշա՛։...

Նարգիզ

ԼՐԱԳԻՐԸ

Կինը, իմ մտերիմ բարեկամ Ուժեղեանի կարծիքով, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի լրագիր. ծնողներն եղել են հրատարակիչներ, ամուսինը՝ պատասխանատու խմբագիր, «տան բարեկամները»—բաժանորդներ։ Ուժեղեանը տեսքով այնքան էլ վատ չէր, այնպէս որ նա էլ, միանգամայն հասկանալի է, բաժանորդների թուումն էր...

Եղաւ որ մի անգամ ես Ուժեղեանի հետ գնում էի ձիաքարշով...

— Տես, ինչ փոքրիկ լրագիր է,—ասաց նա, աչքերով ցոյց տալով մեր դիմացը նըստած մի գողտրիկ շիկահեր կնոջ վրայ։ Զբաղուածորդագրու�՞նք արդեօք...

— Հըմ, վատ չէ... ինչու չբաժանորդագրել... Բայց, արդեօք, նա պատասխանատու խմբագիր ունի՞...

— Նախ և առաջ կիմանանք խմբագրատան հասցէն, իսկ մնացածը յետոյ կը պարզուի...—վճռեց իմ բարեկամը և քաջութեամբ դուրս պրծնելով վագոնի միջից՝ հետևեց շիկահեր կնոջը...

Մի շաբթից յետոյ Ուժեղեանին հանդիպում եմ փողոցում... Նա տարօրինակ կերպով մտայլած էր...

— Ի՞նչ է պատահել քեզ... Չլինի թէ երէկ որևէ մէկի գերեզմանին ներկայ ես եղել...

— Դերեզմանների ժամանակ չունեմ այլևս... Չես ասիլ՝ խաթաբալի մէջ եմ ընկել... Դուրս եկաւ որ այն մեր տեսած փոքրիկ լրագիրը հրատարակիչ է ունեցել... Առաջիկայ շաբթին ես դառնալու եմ նրա պատասխանատու խմբագիրը...

Թարգմ. Դ. Բ.

ՄԵՐ ՔԱՂԱՔԸ

(մեր սեփ. թղթակցից)

Х Բաղաք, 26 հոկտ.

Ասում են, թէ մեր քաղաքը եւրոպական քաղաք է...

Ասում են Բերլին է, Փարիզ է, Նիցցա է, և այդ բանը ամենից շատ ասում է մեր քաղաքի հայր գործակալը։ Ասում է, ու Մոլլա-Նասրէդդինի պէս, երևի ինքն էլ իր ասած ստին հաւատում։

Ասուած տայ, որ էդպէս լինի... Բայց մի բան հարցնեմ.—Ախպէր, ես էտ մեծ-մեծ քաղաքներից ոչ մէկը չեմ տեսել. խնդրում եմ ասէք—դրանք էլ մեր քաղաքի պէս հոտած են...

Էս մեր քաղաքը թամամ, որ հոտած է...

Առաջ—առաջ, (ներեցէք համարձակութեանս) հոտած է հէնց մեր հայր գործակալը։ Ինքը թունդ գրաբառասէր է և այն աստիճան, որ ամեն բանի գրաբառն է սիրում, ինչպէս և... «կանանց». սրանից պակաս չէ և մեր քաղաքի քահանան, սա խօմ, մի քանի աստիճան էլ վեր է գնացել... Էհ, սրանց թողնենք։

Լաւ լաղաթին հոտած է մեր ուպրաւան. ասենք «անդամները» շատ մաքուր հագնուած են, իրանք էլ ճնաս չունի կան Էլի—«Ни въ городѣ Богданъ, ни въ селѣ Селифанъ», բայց ինչպէս երևում է ներքուստ հոտած են։ Ուպրաւան, որ հոտած չլի, քաղաքի փողոցներն ու բազարը հոտած կըլեն. ձեզ եմ հարցնում։

Ամեն օր մի սրուակ одеколонъ եմ փըչացնում թաշկինակիս վրայ, ու քիթս բըռնած շտապով անցնում, իսկ երբ փողոց պակասում է՝ զօր եմ տալիս սեփորին, օրհնի սրա մոգոնողը։

Մի խօսքով էս մեր քաղաքը էնքան է հոտած, որ Թիֆլիսի դարաղխանէն զալաթ է արել սրա մօտ։

Հապա փոստի վարչութիւնը... Այ քեզ կարգ կանոն, ոչ մի посыка չես ստանայ, որ բացուած կամ ջարդուած չլինի, ու մկների հարանիքի մնացորդներով ու «ակուրկաներով» լիքը։ Էս մեր ծխական դպրոցի հոգարարձութիւնն էլ ինչպէս երևում է պակաս հոտած չէ ա՛յ...։ Երրորդ տարին է, ու ոչ մի հաշիւ չի ներկայացրել ծխականներին. ու մէկ-մէկուց ծածուկ սրան-նրան ասում են թէ. «կեղծիք է կատարուած»։

Օրհնուի սրանց ուստաբաշի «Զ»-ն. հազար զալթաբանդութէնով մարդկանց աչքերը կապում է։ Մաղալու է սրանց ժողովը։ Օրակարգի հարցերը մէկը որոշում է, ու ծըխական ժողովում դնում։ Այդ դրուած հարցերից աւել ոչ ոք իրաւունք չունի ուրիշ հարցերի մասին խօսել։ Իսկ ցանկացողները, պարոն «Զ»-ի ասելով՝ կարող են խորհրդակցել կամ իրանց տանը, կամ թէ սըրճարաններում։ Սա էլ երևի եւրոպական քաղաքների ժողովներին կը լինեն նմանեցրած։

Մախլաս...

Մեր քաղաքի ամուսնութեան կարգերն էլ «եւրոպական է»։ Ամեն մարդ—երկուերեք կին ունի։ Մէկն իրանց տանը, մէկը հիւրանոցում, իսկ երրորդը «գրաբառ տանը»։ Ա՛յ երևի հէնց էս բանի համար է մեր հայր գործակալը (ներողութիւն) քաղաքին եւրոպական համարում։

Ես որ լաւ մտածում եմ ու խելքիս զօր տալի.—էս մեր քաղաքի եւրոպական համարուած տեղը կարելի է համարել ծովափնեայ բուլվարը, մէկ էլ ծովը։ Թէ չէ մնացածը Թեհրան ու Բաղդադ էլ չի։

Իմ քոռ խելքը էսքանը կտրեց, իսկ ում խելքը որ «Завяловъ» դանակի պէս սուր է, թող նա էլ իրան գիտեցածը ասի։

Զնդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦѢНА 25 шт. 15 к. 10 ш. 6 к. 100 ш. 60 к.

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15 шт. 6 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

ПАПИРОСЫ
ГОЛУБКА 10 шт. 3 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

ԲԺԻՇԿ
ՓԱՆՕ ՄԱՆԴԷՆԵԱՆ
Մասնագիտութիւն՝ ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ։
Ընդունում է հիւանդներ իր սեփ. տանը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Եկիզաւետեան փող. № 28.
0—24

МАГАЗИНЪ
КОМПОЗИЦІЯ
Тифлисъ, Пушкинскіи пассажъ № 8
громадная экономія
шведскаго композиціон. бѣлья
Носится не менѣе двухъ лѣтъ
Постоянный большой выборъ свѣжаго товара
ВОРОТНИКОВЪ, МАНИШЕКЪ И МАНЖЕТЪ
По фабричнымъ цѣнамъ
Передѣлка въ любой фасонъ безплатно
Продаются портняжныя принадлежности, как-то пугоицы, подкладки, мѣлъ и впрочѣе.
ИНѢЕТТЯ ТУТЪ-ЖЕ ГАЛАНТЕРЕЙНЫЙ ОТДѢЛЪ
Остерегаітесъ поддѣлокъ и подражаній
Просимъ обратится только Пушкинскій пассажъ № 8
15—8 (о. и.) М. А. КАЛТАКЯНЪ

Первокл. ресторанъ
„АННОНА“
„Зданіе Артистическаго Общества“
Сод. Я. Т. Бондаренко
Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвицъ г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.
ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдъ—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спасаться только въ
„АННОНѢ“
52—26

АТРПЕТЪ
1. Мамед-Али-Шах
Народное движеніе въ Персіи ЦѢНА 1 РУБ.
2. Рахим-Хан
Смуты въ Персіи Цѣна 20 коп.
3. ИМАМАТЪ, государственный строй и религіозное воззрѣніе въ Персіи, цѣна 1 руб.
4. БАБИТЫ и БЕХАИТЫ
Новое религіозное теченіе и ученіе въ Персіи цѣна 60 коп.
Во всѣхъ книжныхъ магазинахъ. 00—7

Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառւում է
ՆԱՐԴՈՍ
ՊԱՅՔԱՐ
ՎԷՊ
Գինն է 75 կոպէկ
Գլխաւոր պահեստը «Դուտտենբերգ» գրախանութում, ուր և դիմում են գումարով գնողները։
10—4

Типографія «Культура» Баронская 14. Խմբ.-հրատարակիչ՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

— Հայր սուրբ, էս ինչ ղուշեր են, որ էնա հա՞ վանքի գլխին հաւաքւել են։
— Դէհ, սիրելիս, ինչ պիտ լինին. կուսակցական «հրեշտակներ» կը լինեն, որոնք կուգեն աւերակ վան քից էն վերջին քարերն էլ պոկել։

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՐԱՆ